

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2019-2020 ուստարի)
12-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Որտե՞ղ է գտնվում Ազոխի քարանձավը. 0,5 մ.
ա/ ԼՂՀ Հադրութի շրջան բ/ ԼՂՀ Մարտակերտի շրջան
գ/ ՀՀ Գեղարքունիքի մարզ դ/ ԼՂՀ Ասկերանի շրջան
2. Ե՞րբ է տեղի ունեցել Չավնդուրի ճակատամարտը. 0,5 մ.
ա/ 1723 թ. բ/ 1722 թ.
գ/ 1724 թ. դ/ 1725 թ.
3. Ե՞րբ է Աղասի Խանջյանը ընտրվել ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար. 0,5 մ.
ա/ 1928 թ. բ/ 1930 թ.
գ/ 1933 թ. դ/ 1936 թ.
4. Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվել «Նաիրի» երկրանունը. 0,5 մ.
ա/ Ք.ա. XII դ. վերջ բ/ Ք.ա. XII դ. առաջին կես
գ/ Ք.ա. XIII դ. առաջին կես դ/ Ք.ա. XI դ. առաջին կես
5. Ո՞ր քաղաքն է 1804 թ. գրավվել ռուսական զորքի կողմից. 0,5 մ.
ա/ Երևան բ/ Շուշի
գ/ Գանձակ դ/ Ալեքսանդրապոլ
6. Որքա՞ն մարդ է բռնությունների ենթարկվել 1930-ական թթ. Հայաստանում. 0,5 մ.
ա/ 5 հազար բ/ 15 հազար
գ/ 25 հազար դ/ 40 հազար
7. Որքա՞ն էր Ռուսայի ջրանցքի երկարությունը. 0,5 մ.
ա/ 20 կմ բ/ 25 կմ
գ/ 54 կմ դ/ 72 կմ
8. Ո՞ր վարչական միավորն է ստեղծվել 1840 թ. 0,5 մ.
ա/ Կասպիական մարզ բ/ Երևանի նահանգ
գ/ Հայկական մարզ դ/ Ելիզավետպոլի նահանգ
9. Ո՞վ է Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը: 0,5 մ.
10. Ե՞րբ է Կյուրոսի Մեծի գլխավորությամբ սկսվել Մարաստանի դեմ ապստամբությունը: 0,5 մ.
11. Ո՞վ է ստեղծել առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակը Արևելյան Հայաստանում: 0,5 մ.
12. Ո՞վ է փոխարինել Բ. Կևորկովին ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա/ Հայկական մարզի ստեղծում
բ/ Կովկասի փոխարքայության հիմնում
գ/ Եկեղեցական կանոնադրության հրապարակում
դ/ Թանգիմաթի (1-ին) հրապարակում
ե/ Ադրիանուպոլսի պայմանագրի կնքում
զ/ Հայկական մարզի վերացում
է/ Անդրկովկասի բաժանումը 5 նահանգների
ը/ Տարրականից բարձր հայկական դպրոցների արգելում Ռուսական կայսրությունում
թ/ «Մշակ» թերթի հիմնում
ժ/ «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծում

1	2	3	4	5	6	7	8	9	10

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Մկրտիչ Ավետիսյան
2. Գաբրիել Կաֆյան
3. Խաչատուր Մալումյան
4. Ներսես Աբելյան
5. Խաչատուր Կերեկցյան
6. Արսեն Կրիտյան

ա. Հնչակյան կուսակցություն

բ. Հայ հեղափոխական դաշնակցություն

գ. «Պաշտպան հայրենյաց»

դ. «Բարենպատակ ընկերություն»

ե. Արմենական կուսակցություն

զ. «Ազատության ավետաբեր»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ք.ա. 521 թ. Հայաստանը ճանաչել է Մարաստանի գերիշխանությունը:

բ/ Արտաշեսը Ք.ա. 165 թ. վճռական հակահարված է տվել Սելևկյան Անտիոքոս IV-ին:

գ/ Տիգրան Մեծի տերության բանակն ուներ 500 հազար զինվոր:

դ/ Ք.ա. 41 թ. կազմակերպվել է Երկրորդ եռապետությունը:

ե/ I-III դարերն ընդունված է համարել «բուն հելլենիստական» ժամանակաշրջան:

զ/ Արարատ-Սատաղ մեծ ճանապարհի վրա էին Նախճավանը, Խլաթը, Տիգրանակերտը:

է/ XX դ. սկզբում Չմյուռնիայում բնակվում էր 100 հազար հայ:

ը/ Սարդարապատի հաղթական ճակատամարտը տևել է մայիսի 22-ից մինչև 30-ը:

թ/ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ավելի քան 300 քաջ հայորդիներ զոհվել են Հունաստանի պարտիզանական կոիվների ընթացքում:

ժ/ 1990 թ. մայիսի 20-ին տեղի են ունեցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Հայ իշխանը՝ նախարարը, իր տոհմական իրավունքի սկզբունքով կոչվել է նաև տանուտեր:

բ/ Արտաշատում տիրող կարգ ու կանոնին հետևում էր թագավորական տնտեսը՝ ոստանիկը:

գ/ Քաղկեդոնի տիեզերական ժողովն ընդունել է Քրիստոսի՝ «մեկ անձ, մեկ բնություն» բանաձևը, որի հետևորդները հետագայում կոչվել են քաղկեդոնականներ կամ միաբնակներ:

դ/ Արաբները բռնազավթում էին հայ նախարարների տիրույթների մի մասը՝ ստեղծելով ամիր-սպասալարություններ կոչվող վարչաքաղաքական միավորներ:

ե/ 725 թ. Հերթ ոստիկանի «աշխարհագրից» հետո գլխահարկը փոխարինվել է ծխահարկով:

զ/ Բագրատունիների կառավարման ժամանակաշրջանում մեծապես կիրառվել է եռադաշտային համակարգը:

է/ Կիլիկիայի հայկական թագավորությունում արքունիքից առանձին էին գործում բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:

ը/ Կիլիկիայում քաղաքապետի պաշտոնը զբաղեցնողը կոչվում էր նաև սենեսկալ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ XII դ. սկզբից Հայոց եկեղեցու նվիրապետական հզոր կառույցներից մեկը Աղթամարի կաթողիկոսությունն էր:

բ/ Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվել են 1638 թ., երբ օսմանյան բանակը գրավել է Բաղդադը:

գ/ Չերքեզահայերը 1839 թ. հիմնել են հայկական Արմավիր գաղութը:

դ/ XV դ. Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին:

ե/ Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվում 552 թ. հուլիսի 11-ը:

զ/ XI դ. երկրորդ կեսի նշանավոր եկեղեցական-քաղաքական գործիչ էր Ստեփանոս Օրբելյանը:

է/ 1608 թ. Խաչատուր Կեսարացու ջանքերով հայկական տպարան է ստեղծվել Նոր Զուղայում:


ը/ Գևորգ Չաուշը ծնվել է 1870 թ. Սասունի Մկղենք գյուղում:

թ/ 1989 թ. նոյեմբերի 4-ին բացվել է Հայոց համազգային շարժման առաջին համագումարը:


ժ/ 1993 թ. դեկտեմբերին կատարվել է վարչատարածքային փոփոխություն՝ ստեղծվել են 10 մարզեր:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
Յուսուֆի միջնորդությամբ խալիֆը 908 թ. Աշուրի փոխարեն Հայաստանի թագավոր ճանաչեց Գագիկ Արծրունուն:
19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Կովկասյան զորքերի հետախուզական բաժնի պետի 1914 թ. օգոստոսի 16-ի գաղտնի զեկուցագրից.
Թուրքերի պարկերացումը հայերի մասին՝ որպես մի փարրի, որը խանգարում է իրագործելու մեկ ամբողջության մեջ թուրք-թաթարների միաձուլման իրենց երազանքը, նպաստել է նրան, որ Թուրքիայի սահմանադրական ոչ մի կառավարություն չի վերացրել «հայերին ոչնչացնելու» համիդյան կարգախոսը: Նույն այդ կարգախոսն ընդունել է նաև Գերմանիան, որն ուժգնորեն խրախուսում է թուրքերին այդ գործում, քանի որ նրան ձեռնպահ է Ռուսաստանի հարավում համադարձ թուրք-թաթարական պայտնեշը: Թուրքիան ճնշելու և բռնանալու է հայերի հանդեպ թե՛ հաղթանակի, թե՛ պարտության դեպքում: Բալկանյան պարտերազմի ժամանակվա և դրանից հետո եղած փորձն սպացուցել է նման գործելաճի գործնականությունն ու անպարժելիությունը:
ա. Ե՞րբ է (նշե՛ք տարին և ամիսը) պետական հեղաշրջման հետևանքով Օսմանյան կայսրությունը հռչակվել սահմանադրական միապետություն:
բ. Ե՞րբ է (նշե՛ք տարին, ինչպես նաև սկզբի և ավարտի օրերը) տեղի ունեցել Բալկանյան երկրորդ պատերազմը:
գ. Մեծ Թուրանի ստեղծման ո՞րերորդ փուլում պետք է ոչնչացվեր արևելահայությունը:
20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Արարտայի արքան միաժամանակ երկրի գերագույն ... -ն (1) էր: Երկրի կարևորագույն հարցերի լուծման համար նա գումարում էր ... (2): Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «...» (3):
21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 13000 փարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:
22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր փոքր աշխարհն է նրան սահմանակցում հյուսիսարևելյան երկայնքով:



23. Միջնադարյան հայ ո՞ր գիտնական-փիլիսոփան է իր աշակերտների հետ պատկերված. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
 19-20-րդ դդ. սահմանագլխի այս ծաղրանկարում հեղինակը ակնարկում է, որ, ի թիվս այլ հարցերի, Հայկական հարցում Օսմանյան կայսրությունը վայելում էր այդ պետության աջակցությունը:
 ա. Ո՞վ է պատկերված նկարի ձախ կողմում:
 բ. Ո՞ր պետության ղեկավարն է նկարի աջ կողմում պատկերված միապետը:





10. Ո՞ր վեհաժողովն է պատկերված, եթե նրանում առաջին անգամ հնչել է «ազգերի ինքնորոշում» հասկացությունը. 0,5 մ.



11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ.

1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Ո՞ր ժամանակաշրջանի սկիզբն է պատկերված ծաղրանկարում:
բ. Նշե՛ք պատկերված պետական գործչի անունը և ազգանունը, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի սկիզբն ազդարարած նրա ճառի վայրը:

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2020 թ.